Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1076[3]-19.01.2011-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի N ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 19-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«19. որոշում է ընդունում Երեւան քաղաքի գլխավոր հատակագծի, դրա փոփոխությունների, ինչպես նաեւ՝ նախագծման առաջադրանքի վերաբերյալ.».

2. 1-ին մասի 20-րդ կետում «նախագծերի» բառից հետո լրացնել «ինչպես նաեւ՝ նախագծման առաջադրանքի վերաբերյալ» բառերը.».

3. 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 20.1-րդ կետով.

«որոշում է ընդունում հողամասերի նպատակային նշանակության փոփոխության մասին.».

Հոդված 2. Օրենքի 53-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9. Երեւան քաղաքի գլխավոր հատակագծի եւ դրա փոփոխությունների, ինչպես նաեւ նախագծման առաջադրանքի նախագծերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.».

2. 1-ին մասի 10-րդ կետը «գոտիավորման» բառից հետո լրացնել «ինչպես նաեւ՝ նախագծման առաջադրանքի նախագծերը» բառերը.

3. 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-րդ կետով.

«հողամասերի նպատակային նշանակության փոփոխության մասին նախագծերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ դեպքերում.».

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննությանը:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով:
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի ՀՀ կառավարության սահմանած տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, կառուցապատողի և շինարարություն իրականացնողի համաձայնությամբ կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 6-րդ մասով:
	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով, որ քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության, շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությունների լիցենզավորման կարգերում կատարված փոփոխությունների համաձայն նշված	Ընդունվել է	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնում կատարվել են համապատասխան

	գործունեությունների իրականացման համար լիցենզավորվող անձանց լիցենզիաների հետ տրամադրվելու են համապատասխան ներդիրներ՝ ըստ ոլորտների:		փոփոխություններ:
ՀՀ ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի առաջին մասի 3) ենթակետը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: